ՎԻԿՏՈՐԻ ՊԼԱՆ

«Հաղթանակ»-ի ծրագիր

Սիրելի՛ երևանցիներ, Երևանը պետք է լինի այնպիսի քաղաք, որտեղ քաղաքի առաջին տերը քաղաքացին է՝ դուք, հետո միայն՝ ձեր ընտրած քաղաքային իշխանությունը, ոչ թե հակառակը:

Երևանը պետք է լինի ՄԱՐԴԱՄՈՏ ՔԱՂԱՔ:

Մեր ծրագիրը՝ «Վիկտորի պլան»-ը, միտված է հենց դրան:

> Ստանալով ձեր վստահության քվեն՝ առաջիկա տարիների ընթացքում միասին Երևանը կդարձնենք ՄԱՐԴԱՄՈՏ ՔԱՂԱՔ:
> Մենք համարում ենք, որ այսօր Երևանը բազմակողմանի ճգնաժամի մեջ է, և անհրաժեշտ է ճգնաժամային կառավարում՝ իրավիճակը շտկելու համար:
> Մենք պատրաստ ենք ստանձնել ճգնաժամային կառավարչի պատասխանատվությունը, միևնույն ժամանակ, առաջարկելով նաև հեռանկարային զարգացման ծրագիր:

Ծրագրի բոլոր առաջնահերթությունները բխում են մեր համաքաղաքացիներին հուզող խնդիրներից: Այն համակարգված և մտածված գործողությունների հստակ ծրագիր է, կոնկրետ միջոցառումների տեսլական և գործնական քայլերի ամբողջություն:
Ծրագիրը ներառում է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտները՝ վերջնական նպատակ համարելով հարմարավետ, ապրելուն, արարելուն, աշխատելուն և հանգստանալուն հարմար քաղաք ունենալը:
Ուրբանիզացիայի ժամանակակից թրենդը քաղաքների, այսպես ասած, մարդկայնացումն է: Մեր նպատակը ՄԱՐԴԱՄՈՏ ՔԱՂԱՔ ՈՒՆԵՆԱԼՆ է, այսինքն՝ քաղաք մարդու համար, որտեղ հաճելի կլինի ապրելը, ստեղծագործելը, շփվելը, հանգստանալը, երեխաներ դաստիարակելը, ծերությունն անցկացնելը: Ի վերջո, քաղաք, որտեղ պարզապես կցանկանան վերադառնալ, նորից այցելել, գալ ու մնալ...

Այս ամենը ինչ-որ վերերկրային իդեալ չէ, այլ՝ լիովին իրականանալի գաղափար: Մենք գիտենք այդ գաղափարն իրականություն դարձնելու ճանապարհը, ունենք ծրագիր և հստակ պատկերացնում ենք դրան հասնելու ճանապարհը:

Այսօր հնարավորություն կա փոխել իրավիճակը, սակայն դրա համար անհրաժեշտ է հսկայական աշխատանք կատարել: **Եվ դա պետք է անենք միասին, սիրելի՛ երևանցիներ:** Մենք ձեզ հետ միասին աշխատելու, ստեղծելու և այդ ստեղծածը համատեղ վայելելու ցանկություն և մտադրություն ունենք, նպատակին հասնելու կամք և ձեր կամքը հարգելու կարողություն:

Դրա համար «ՀԱՂԹԱՆԱԿ»-ի հետ ՀԱՂԹԱՆԱԿ է պետք, ինչին հասնելու համար նախատեսում ենք՝

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Ապահովել բնակչության անվտանգությունը, այդ թվում՝ հնարավոր պատերազմների ու աղետների ժամանակ: Բոլոր վարչական շրջաններում պետք է լինեն ապաստարաններ և թաքստոցներ՝ համապատասխան նյութական և բժշկական ապահովությամբ: Ներդնել աղետային բժշկության համակարգ՝ վերապատրաստման միձոցով ներգրավեով նաև բուժհաստատությունների մասնագետներին:
- Պարբերաբար անցկացնել քաղաքացիական պաշտպանության վարժանքներ, այդ թվում՝ դպրոցներում՝ քաղաքացիներին պատրաստելով հնարավոր արտակարգ իրավիճակներին դիմակայելուն, մշակել տարհանման պլան:
- Անվտանգության համալիր միջոցառումների համատեքստում պետք է ապահովել քաղաքի համապարփակ անվտանգություն՝ սննդի անհրաժեշտ պաշարների ամբարումից մինչև ջրամատակարարման, Էներգետիկ և գազի անվտանգություն:
- Անվտանգությունը նաև պարենային պահուստարաններն են՝ սառնարաններ, պահոցներ և այլն, որոնց պահպանման, կառուցման համար անհրաժեշտ են հրատապ քայլեր:
- Վերականգնել կամ ներդնել լարային ռադիոյի ցանց:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Հնարավորինս արագ նախաձեռնել Երևանի **ռազմավարական մաստեր պլան**ի ստեղծումը:
- Մինչ ռազմավարական պլանի հաստատումը պետք է հայտարարել կառուցապատման մորատորիում՝ Փոքր Կենտրոնում արգելելով 4 հարկից ավել բարձությամբ շենքերի կառուցումը:
- Կոնդում կառուցվող շինությունները չպետք է 1-2 հարկից բարձր լինեն: Կոնդում իրականացվող վերակառուցման ծրագրերը պետք է հետևեն մեկ ընդհանուր նախագծի: Միևնույն ժամանակ, ցանկացած բարեկարգման կամ շինարարական աշխատանքներ իրականացնելիս պետք է հարգանքով հաշվի

նստել բնակիչների կարծիքի հետ, ինչպես նաև խստորեն պահպանել Կոնդի բոլոր փողոցների և նրբանցքների ինքնատիպ պատմամշակութային կոլորիտը և ճարտարապետական տեսքը՝ դրանով իսկ ապահովելով Կոնդի գրավչությունը երևանցիների և հյուրերի համար: Կատարել հնէաբանական հետազոտություններ:

- Բոլոր վարչական շրջաններում պետք է ստեղծվեն ճեմուղիներ՝ տվյալ թաղամասի ամենաքիչ ծանրաբեռնված փողոցները ՝ փակելով դրանք տրանսպորտի համար և դարձնելով բացառապես հետիոտնային:
- Փոքր Կենտրոնում մայթերի և կանաչ տարածքների հաշվին տեղադրված գովազդային վահանակները պետք է տեղափոխվեն այլ թաղամասեր՝ այնտեղ նույնպես բացառելով դրանց տեղակայումը կանաչ տարածքներում և մայթերին:
- Պետք է բացառել բակային տարածքներում (անկախ դրանց սեփականության ձևից), ջրային տարածքների՝ ավազանների, շատրվանների, լիճ ու լճակների տեղերում շինարարության իրականացումը, այսինքն՝ արգելել դրանց տարածքները վերածել շինհրապարակների:
- Շենքերի տանիքներին մանսարդների կառուցման համար թույլատրել տանիքային տարածքների օտարումն աճուրդների միջոցով, շուկայական գներին համապատասխան: Աճուրդ-վաճառքից ստացվող գումարները կօգտագործվեն հիմնականում քաղաքին վերաբերող սոցիալական խնդիրների լուծման, այդ թվում՝ հասարակական անվճար տրանսպորտ ունենալու նպատակով:
- Մանսարդները կարող են կառուցվել բնակիչների գերակա շահերը հաշվի առնելով, առանց շենքերի տեսքը, Երևանի դեմքն աղճատելու և ձևախեղելու, առանց բնակիչների անվտանգությանը որևէ կերպ սպառնալու, բացառապես քաղաքապետարանի կողմից հաստատվող միանման նախագծերով, օրենսդրական կարգավորումներին, քաղաքաշինական բոլոր փաստաթղթերին ու նորմերին համապատասխան՝ առաջնահերթությունը տալով շենքի բնակիչներին:
- Խստորեն վերահսկել փորձաքննական ընկերությունների գործունեությունը, որոնք հաճախ պարզապես մեխանիկական աշխատանք են կատարում եւ նախագծերի հետ կապված տրված եզրակացությունները տալիս են ձևի համար:
- Հատկապես խնդրահարույց շինթույլտվություններով կառուցապատողները պետք է սոցիալական պատասխանատվություն ունենա և շենքերի հետ միասին նաև ենթակառուցվածքներ ստեղծի ապագա բնակիչների համար, կամ գոնե առնվազն որևէ կերպ մասնակցի հարևանությամբ գտնվող համապատասխան կառույցների՝ դպրոց, մանկապարտեզ, մարզահրապարակ, պուրակի

բարեկարգմանը: Սա պետք է դիտարկվի որպես շինթույլտվության պարտադիր բաղադրիչ: Մյուս կողմից, չպետք է տարբեր սխեմաներով, այդ թվում՝ կոռուպցիոն պատրվակներով ուշացնել շինթույլտվությունները, ձգձգել համապատասխան փաստաթղթերի տրամադրումը, եթե ամեն ինչ համապատասխանում է օրենքին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ և մշտական ուշադրության կենտրոնում ստեղծել առնվազն մեկ բազմապրոֆիլ բժշկական-գիտահետազոտական կենտրոն՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով, համալրված բանիմաց մասնագետներով, որը կսպասարկի հիմնականում սոցիալապես անապահով խավին, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ռազմական գործողությունների/պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին՝ դարձնելով քաղաքի լավագույն առողջապահական կենտրոնը:
- Ձևավորել, զարգացնել և հասանելի դարձնել շրջիկ բուժսպասարկման մեխանիզմները:
- Բոլոր պոլիկլինիկաներում ապահովել համապատասխան մասնագետների պարտադիր առկայություն, առանձնացնել մանկական և մեծահասակների բաժանմունքները տարբեր շենքային տարածքներում:
- Քաղաքային իշխանությունը պետք է վերանայի բժշկական ապահովագրության շահառուների ցանկը; տրամադրման քաղաքականությունը՝ թե պացիենտի շահի տեսանկյունից, թե բուժաշխատողի; ինչպես նաև՝ տեղերում թիրախային խմբերի համար հասանելիության լիարժեքությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ, ՓՈՂՈՑ

Երևանը պետք է հարմարավետ լինի մարդկանց, նոր միայն՝ ավտոմեքենաների համար: Մեր առաջարկածը ոչ թե հասարակական տրանսպորտի, այլ ընդհարապես տրանսպորտային ռեֆորմ է:

- Փոքր Կենտրոնի բոլոր միակողմանի փողոցների մայթերը պետք է լայնացնել երթևեկելի մասի հաշվին: Հետագայում հնարավարության դեպքում դա ցանկալի է տարածել բոլոր վարչական շրջանների վրա:
- Փոքր Կենտրոնում, հաշվի առնելով բնակիչների կարծիքները, ժամը 7-ից մինչև ժամը 23-ը պետք է արգելել հատկապես մթերային խանութների առաքումները:
- Մենք նախատեսում ենք հասարակական տրանսպորտի ոլորտի արմատական և **համակարգային** բարեփոխում. սա ունի նաև սոցիալական բաղադրիչ: Հասարակական տրանսպորտը Երևանում պետք է լինի **անվճար**: Անհրաժեշտ դոտացիան վճարելու է քաղաքը՝ դրա համար գտնելով նոր միջոցներ և ավելի արդյունավետ օգտագործելով եղած հնարավորությունները: Այս բարեփոխումը, որը սկզբնապես կլինի պիլոտային, կխթանի, որպեսզի հասարակական տրանսպորտը դառնա գերակայող փոխադրամիջոց, այսինքն՝ բնակչության ավելի լայն խավեր նախընտրեն օգտվել հասարակական տրանսպորտից, անկախ իրենց սոցիալական վիճակից:
  Մենք փողի տեղն էլ գիտենք, իրականացման մեխանիզմներն էլ, և դա որևէ բեռ չի լինելու առանց այն էլ սոցիալական շատ խնդիրներ ունեցող բնակչի վրա:
- Երևանում պետք է վերականգնել **տրամվայը** որպես ամենաէֆֆեկտիվ հասարակական տրանսպորտ:
- Երևանում տրանսպորտի վատ վիճակը պայմանավորված է ոչ թե շարժակազմի անբավարար թվաքանակով, այլ, առաջին հերթին, երթուղային ցանցի անկատարությամբ: Երևանի հասարակական ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցը պետք է արդիականացվի և վերանայվի: Այն չպետք է կախված լինի այս կամ այն պաշտոնյայի քմահաճույքից, անկախ նրա զբաղեցրած պաշտոնից, և պետք է բացառապես նպաստի քաղաքացու հարամարվետ տեղաշարժին:
- Ավտոբուսների կանգառները պետք է դառնան տերմինալներ, որոշ տերմինալներ՝ յուրատեսակ տրանսպորտային հաբեր: Ծրագիրը կսկսենք Կենտրոնից, մասնավորապես Մաշտոցի պողոտայից, այնուհետև կծավալենք նաև քաղաքի այլ հնարավոր տարածքներում:

Պլանավորվում է՝

- Տրանսպորտի խնդիրներով զբաղվող գիտահետազոտական կառույցի ստեղծում քաղաքապետարանի կազմում:
- Հասարակական տրանսպորտի կանգառների վերանայում և, անհրաժեշտության դեպքում, վերատեղակայում: Կանգառները չպետք է տեղադրվեն ըստ այս կամ այն խանութի կամ այլ սեփականատիրոջ հարմարավետությունից ելնելով:

Դրանք պետք է հարմար լինեն հասարակական տրանսպորտին և դրանից օգտվող քաղաքացուն:

- Ստորգետնյա ավտոկայանատեղիների կառուցում, այդ թվում՝ կառուցվող բազմաբնակարան շենքերի և առևտրի/զվարճանքի օբյեկտների տերերի համար պարտադիր համարելով նման կայանատեղիների առկայությունը:
- Հատուկ տեղերի առանձնացում հեծանվային զբոսանքների համար: Շարունակաբար ստեղծել հեծանվուղիներ, այդ թվում՝ առաջին փուլում 10 կմ, երկրորդ փուլում՝ 15 կմ՝ խրախուսելով էկոլոգիապես մաքուր տրանսպորտի օգտագործումը և կարևորելով բնակչության առողջությունը:
- Կանոնակարգել էլեկտրական սկուտերների անկանոն երթևեկությունը:
- Փոքր Կենտրոնի կայանատեղիների բալանսավորման և ավելի արդյունավետ կարգավորումների համար՝ ըստ հասարակական վայրերի, լիցենզիաներ տրամադրել նոր 20 վալեյ-պարկինգների (valet parking), կառուցել նոր 6 ստորգետնյա կայանատեղիներ, համար:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

- Ստեղծել և կիրառել օդի, ջրի և հողի աղտոտվածությունը վերահսկելու ավելի խիստ կանոնակարգեր:
- Նպաստել թափոնների կրճատման և վերամշակման ծրագրերին, նվազագույնի հասցնել թափոնների առաջացումը:
- Խրախուսել թափոնների կայուն կառավարումը՝ ներառյալ վերամշակման օբյեկտների զարգացումը և շրջանաձև տնտեսության սկզբունքների խթանումը:
- Նպաստել հասարակական տրանսպորտի մաքուր և արդյունավետ տարբերակների զարգացմանը՝ ունենալ էկոլոգիապես մաքուր, խնայող և արժանավայել հասրակական տրանսպորտ, հեծանվային երթուղիներ և ենթակառուցվածք ապահովել հետիոտների հարմարավետ և անվտանգ տեղաշարժը:
- Խրախուսել այնպիսի քաղաքային պլանավորումն ու քաղաքաշինությունը, որը մասնավորապես ներառում է կանաչ տարածքներ, էներգաարդյունավետ շենքեր:
- Օդի աղտոտվածությունը պակասեցնելու նպատակով ներդնել փոշու կառավարման միջազգային լավագույն տեխնոլոգիաները, կառուցապատման շինթույլտվությունները տրամադրել բացառապես փոշու կառավարման մեխանիզմների առկայության դեպքում:

- Երևանի յուրաքանչյուր համայնքում ստեղծել ջրային ավազաններ՝ առափնյա հանգստի գոտիներով, ավելացնել կանաչ տարածքները:
- Նոր տեխնոլոգիաների ներդրմամբ քաղաքային աղբավայրի/աղբավայրերի գործունեության արդիականացում, թափոնների մշակման ներդրում
- Վարձակալության տրված զբոսայգիների վարձակալների հետ սերտ համագործացություն, աշխատանք և նրանց գործունեության ամենօրյա հսկողություն, այդ թվում՝ տեսախցիկների տեղադրման միջոցով:
- Երևանին բնության շունչ ավելացնելու համար բազմաբնակարան շենքերի մուտքերի հարակից տարածքները, հնարավորությունները հաշվի առնելով, կանաչապատել և ստեղծել ծաղկանոցներ:
- Մանկական, այդ թվում՝ բակային խաղահրապարակների կառուցում նույն՝ միանման նախագծերով և ստանդարտներով՝ առաջնահերթությունը տալով փայտի օգտագործմանը:
- Կանաչապատել Երևանի հնարավոր բոլոր հարթ տանիքները՝ օգտագործելով բնակիչների հանգստի և ժամանցի համար: Որոշ տանիքներում մշակել ագրարային ինովացիոն ֆերմաներ (urban rooftop agriculture)՝ պարենային անվտանգության նպատակով:
- Երևանի 200 հեկտարից ավելի բաց և փակ գերազմանատներում ներդնել կաթիլային համակարգ, ծառատունկի ծրագիր իրականցնելու նպատակով: Ծրագրի նպատակը նախևառաջ քաղաքը փոշուց ու աղտոտվածությունից պաշտպանելն է:
- Բազմբնակարան շենքերի մուտքերի հարևանությամբ, տարածքի հնարավորությունները հաշվի առնելով, ստեղծել գեղեցիկ ծաղկանոցներ: Այդ ամենը արդյունավետ կազմակերպելու համար լիցենզավորել բնակիչների՝ բակի, շենքի փողոցային հարակից տարածքի կանաչապատման աշխատանքներին հետևելու համար: այսպիսով ամրապնդելով նաև քաղաքային իշխանության և բնակիչների համագործացությունը քաղաքի խնամքի գործում: Կառավարչական այս ձևը կիրառել նաև այգիների և պուրակների դեպքում:

Մեր նպատակն է հարստացնել բակային կանաչապատման ծավալները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԺԱՄԱՆՑ

- Երևանի մշակութային կյանքը պետք է դարձնել ավելի ժամանակակից և մրցակցային: Միևնույն ժամանակ, ազգային արժեհամակարգի, ինքնագիտակցության ամրապնդմամբ, մշակութային ինքնության տարրերի (նյութական, ոչ նյութական ժառանգություն, պատմական լանդշաֆտ) պահպանությամբ և հանրահռչակմամբ, մշակութային դիվանագիտության կիրառմամբ նպաստել ազգային/պետական անվտանգությանը:
- Վերաիմաստավորել համայնքային գրադարանների գաղափարը և գործունեության բնույթը՝ զուտ ընթերցանության վայրից դրանք դարձնելով նաև մասնագիտական վերապատրաստումների, ինտելեկտուալ շփումների հանրային ՄԱՐԴԱՄՈՏ կրթամշակութային կենտրոններ:
- Սիրիայից հայրենադարձված մեր հայրենակիցների համար ստեղծել համայնքային մշակութային կենտրոն՝ նրանց համար ձևավորելով հանդիպումների և շփումների հարազատ միջավայր:
- Մշակութային ժառանգության միջոցով նպաստել տեղական և միջազգային զբոսաշրջության զարգացմանը՝ հատկապես կարևորելով էթնոտուրիզմի (կենդանի ժառանգության վայրերի այցելություններ) զարգացումը:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մուտքը թանգարաններ և տեսարժան վայրեր դարձնել անվճար: Արվեստը և ազգային ժառանգությունը քաղաքացիների համար պետք է լիովին հասանելի լինեն:
- Կանգառներում կամ քաղաքին պատկանող այլ գույքի վրա տեղադրվող գովազդների առնվազն 50%-ը պետք է ունենա սոցիալական կամ կրթամշակութային բովանդակություն:
- Բոլոր երեխաներն առաջին դասարանից պետք է հաճախեն իրենց տարածքի մանկապարտեզներ և դպրոցներ: Ընտրությունը պետք է ազատ լինի միայն Արցախից, Սիրիայից տեղահանված, ինչպես նաև ֆորսմաժորային տարբեր իրավիճակների պատճառով Հայաստանում հաստատված մեր հայրենակիցների համար:
- Սոցիալական արդարության ապահովման, խտրականության, երեխաների հոգեբանական դիսկոմֆորտի բացառման նպատակով Երևանի պետական դպրոցներում պետք է ներդրվի աշակերտական համազգեստ: Այն պետք է աշակերտներին հատկացվի համայնքային բյուջեի հաշվին՝ բիզնեսների սոցիալական պատասխանատվության ծրագրով ստացված եկամտից:

- Պետք է քայլեր ձեռնարկել համայնքից անարադորեն սեփականաշնորհված կրթամշակութային օբյեկտները քաղաքին վերադարձնելու կամ սեփականատերերի հետ համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Երևանցիների հանգստի վայրերի ավելացում, այդ թվում՝ նաև քաղաքապետարանի միջոցներով սրճարանների բացում այն տարածքներում, որոնք մասնավորը համարում է ոչ եկամտաբեր:
- Պետք է լինեն բարենպաստ և ամենալավ պայմանները քաղաքի բոլոր բնակիչների համար. բոլոր բնակիչները և՛ մարդիկ են, և՛ այդ քաղաքի մի մասը կազմող կենդանիները: Կարևոր են և՛ մարդու իրավունքները, և՛ կենդանիների ապրելու իրավունքը: Պետք է լինի մարդ - կենդանի հարաբերությունների հստակ կարգավորում:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Յուրաքանչյուր վարչական շրջանում պետք է լինի իր վարչական շրջանի խնդրին լուծում տվողը: Ըստ այդմ՝ պետք է ընդլայնել թաղապետերի լիազորությունները՝ նրանց պատվիրակելով քաղաքապետարանին/քաղաքապետին տրված որոշակի լիազորություններ:
- Երևանի հիմնական համը, հոտը, աղը և ողնաշարը Երևանի **թաղեր**ն են: Իրական Երևանի ինքնությունը պահում են Երևանի թաղերը: Երևանի պատմականորեն հայտնի թաղերը պետք է ունենան կառավարման հնարավորություն՝ իրենց թաղապետերով:
- Բնակիչներին և փորձագիտական հանրությանը պետք է ներգրավել կառավարման որոշումների մշակման, քննարկման կայացման գործընթացում:
- Քաղաքապետարանի առանցքային վարչությունների պետերի ինտենսիվ շրջայց վարչական շրջաններում և հանդիպում բնակչության հետ՝ առանց տվյալ վարչական շրջանի ղեկավարի ներկայության:
- Բազմաբնակարան շենքերի բակերի, հասարակական տարածքների խնամքի կազմակերպումը պետք է իրականացվի կառավարչական հիմնարկների միջոցով: Դրանք կարող են համագործակցել համատիրությունների հետ՝ ավելի օպերատիվ արձագանքելով բնակիչների կարիքներին և ավելի օպերատիվ լուծելով բակերի և շենքերի խնդիրներին:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Երևանի քաղաքապետը չպետք է լինի նաև ավագանու ղեկավար: Դրանով իսկ կապահովվի մայրաքաղաքի օրենսդիր և գործադիր ճյուղերի հավասարակշռությունը և շահերի բախումը:
- Քաղաքում սանիտարական աղբահանության և կանաչապատման աշխատանքներով պետք է զբաղվեն ոչ թե մեկ, այլ մի քանի լիցենզավորված ընկերություններ:
- Երևանի բոլոր վարչական շրջանները և բոլոր թաղերը պետք է գրագետ կառավարվեն և զարգանան համաչափ զարգացման ձևաչափով:
- Երևանի բնակչին, որ թաղամասում էլ նա ապրելիս լինի, պետք է հավասարաչափ հասանելի լինի ամեն ինչ՝ տրանսպորտ, ենթակառուցվածքներ, կանաչ գոտիներ, ջրային գոտիներ, հանգստի և մշակութային վայրեր:
- Երևանն աստիճանաբար պետք է դառնա **15 րոպեանոց քաղաք**, այսինքն՝ քաղաքային ենթակառուցվածքները, մշակութային օջախները, առողջապահական, առևտրային, հասարակական օբյեկտները պետք է գտնվեն 15-րոպեանոց հասանելիության վրա: Սա նշանակում է, որ այդպիսի հաստատություններ պետք է լինեն ոչ միայն քաղաքի կենտրոնում, այլև բոլոր համայնքներում, թաղերում:
- Երևանում՝ բոլոր համայնքներում, պետք է լինեն առնվազն 50 մանկական լողավազան և ֆուտբոլի դաշտեր՝ անվճար և մարզիչներով:
- Բոլոր, այդ թվում՝ նորակառույց թաղամասերը պետք է ինտեգրել քաղաքի ընդհանուր սխեմային, համակարգին և մթնոլորտին:
- Աշխարհի առաջատար շատ երկրների հատկապես մեծ քաղաքներում այսօր շատ կարևոր է թաղամասի , այսպես ասա՝ քայլելով հասանելլիությունը. մարդիկ փնտրում են ապրելու, աշխատելու և այցելելու վայրեր՝ հաշվի առնելով այս կամ այն հաստատություն քայլելով հասնելու հնարավորությունը:
- Մյուս կողմից, որպեսզի մարդը շահագրգռված լինի քայլել, պետք է քաղաքի տարբեր հատվածներ հնարավորինս շատ և հարմար միմյանց կապված լինեն ճեմուղիներով, հետիոտնային հատվածներով, ավելանան հասարակական, հանրային տարածքները:

  Սա իր հերթին ներառում է մի շարք բաղադրիչներ, մասնավորապես՝ տնտեսական գործոնը: Քայլող մարդն ավելի հաճախ է կանգ առնում՝ հետաքրքրվելու օրինակ, նախ՝ այս կամ այն խանութի ցուցափեղկով, հետո՝ նաև խանութով, ինչն, ի վերջո, կարող է վերածվել գնումների: Նույնը վերաբերում է նաև մշակութային միջոցառումների ցուցանակներին, որոնք քայլող մարդու աչքին ավելի տեսանելի են:

Քայլող մարդու մեջ հետաքրքրություն արթնացնելու համար անհրաժեշտ է մաքուր, լավ խնամված և հետաքրքիր ու գրավիչ շրջակայք՝ հարակից խանութների, հաստատությունների ցուցափեղկերով և մայթերի հետաքրքրություն առաջացնող ձևավորումներով և, իհարկե, փողոցային արվեստով՝ երաժիշտներից մինչև նկարիչներ:
Այս ամենի մեջ ակնհայտ է նաև քայլելու սոցիալական առավելությունը: Երբ մարդը քայլում է ոտքով, ավելի շատ է շփվում շրջապատի՝ մարդկանց, բնության, արվեստի հետ, ավելի հանգիստ մերվում միջավայրին, ավելի լավ ճանաչում այն: Սակայն որպեսզի նա շահագրգռված լինի տեղաշարժվել քայլելով, հասանելիությունից բացի կարևոր են նաև անվտանգությունն ու ապահովությունը՝ այսինքն՝ լուսավորված փողոցներ, **լայն մայթեր**, բավարար թվով և հարմարավետ հետիոտնային անցումներ, սկուտերների բացակայություն, ինչպես նաև պարբերաբար հանգստանալու հնարավորություն՝ նստարաններ:

- Եվ, վերջապես, քայլելը նաև առողջություն է, ինչը նշանակում է ևս մի կարևոր բաղադրիչ առողջ քաղաք ունենալու համապատկերում:

ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԴԻՐ

- Երևան քաղաքում անօթևան կենդանիների խնամքի ծրագրի իրականացման նպատակն է ամրապնդել մարդկանց և նրանց շրջակա միջավայրի հարաբերությունները՝ ընդգծելով կենդանի էակների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը: Այս մոտեցումը թույլ է տալիս քաղաքին դառնալ մի վայր, որտեղ հարմար և հաճելի է ապրել՝ կենտրոնանալով մարդկանց կարիքների և ցանկությունների վրա: Բացի այդ, անօթևան կենդանիների խնամքին մասնակցելը բարձրացնում է կարեկցանքի և հարգանքի կարևորագույն խնդիրը: Համագործակցությունը և համատեղ ջանքերը համախմբում են քաղաքացիներին մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ նպաստելով ընկերական և աջակցող հասարակության ստեղծմանը, որտեղ բոլորն իրենց հարգված և կարևոր անդամ են զգում:
- Կարեկցանք և հարգանք. երբ մենք հոգում ենք անօթևան կենդանիների մասին, դա նշանակում է, որ մենք գնահատում ենք նրանց կյանքն ու հարմարավետությունը: Այն կարող է մարդկանց ոգեշնչել լինել ավելի հոգատար և աջակցել միմյանց:

- Խնամք խոցելի խմբերի համար. Կենդանիների խնամքը հիշեցնում է մեզ պաշտպանության կարիք ունեցողների հոգալու կարևորության մասին: (փոքրամասնություններ, հաշմանդամներ, ծերեր և այլն):
- Կրթություն և փոխըմբռնում. Կենդանիների խնամքի ծրագիրը կարող է օգնել մարդկանց հասկանալ կենդանիների համար լավ կենսապայմաններ ապահովելու կարևորությունը: Սա կարող է օգնել փոխել մտածելակերպը և ստեղծել հյուրընկալ մթնոլորտ:
- Հարմարավետության ստեղծում. կենդանիների համար հատուկ վայրերի նախագծումը և նրանց թվաքանակի վերահսկումը քաղաքն ավելի հարմարավետ կդարձնի բոլորի համար: Ինչը իր հերթին կձևավորի ավելի հաճելի և դրական մթնոլորտ:
- Ընդհանուր առմամբ, անօթևան կենդանիներին խնամելու մեր նախաձեռնությունը կոչված է քաղաքը ավելի մոտեցնելու բնակիչներին՝ ընդգծելով մարդկանց միջև համերաշխության, բարի կամքի և ստեղծագործական հարաբերությունների կարևորությունը՝ ավելի ներդաշնակ և հաճելի քաղաքային միջավայր ստեղծելու համար:

«ՎԻԿՏՈՐԻ ՊԼԱՆ»-ը մշակել ենք «Հաղթանակ» կուսակցության անդամ ու համակիր փորձառու, բանիմաց, մասնագետ անհատների և անհատականությունների հետ: Այն միջազգային փորձի տեղայնացմամբ Երևանը ձևով ու բովանդակությամբ նոր որակի բարձրացնելու գործողությունների ծրագիր է, որը սպասում է իր մեկնարկին:
Եվ այդ մեկնարկի կոճակը գտնվում է ձեր ձեռքերում, որովհետև դո՛ւք եք ինչպես խնդիրներ առաջադրողը, այնպես էլ դրանց լուծումները պահանջողը:

Եվ այդ մեկնարկը պետք է լինի ՀԱՂԹԱՆԱԿԻ սկիզբը: